

Ուրախ ենք տեղեկացնել ս.թ. հոկտեմբերի 23-26-ը ք. Ծաղկաձորում կայանալիք «Նորարարությունների կառավարում» III միջազգային երիտասարդական գիտական դպրոցի հայտադիմումների ընդունման մեկնարկի մասին:

Դպրոցի նպատակն է ինտերակտիվ դասընթացների միջոցով մասնակիցներին ծանոթացնել գիտահետազոտության նախագծերն առևտրայնացնելու արդյունավետ մեխանիզմներին, գաղափարից մինչև շուկա հասնելու գործընթացին և առանձնահատկություններին, ինչպես նաև տալ անհրաժեշտ գիտելիքներ և հմտություններ մտավոր սեփականության օբյեկտների պահպանության և կառավարման բնագավառներում:

Դպրոցի ծրագրով նախատեսված են դասախոսություններ և վարպետության դասեր (master class), աշխատաժողովներ, օրինակների քննարկումներ և թեմատիկ խաղեր ինովացիոն մենեջմենթի և նախագծերի կառավարման ոլորտի առաջատար մասնագետների և հրավիրված դասախոսների կողմից:

Մրցույթին մասնակցելու համար անհրաժեշտ է մինչև 2017թ. **հոկտեմբերի 1-ը** ներառյալ լրացնել մասնակցության հայտը հետևյալ հղումով <https://goo.gl/tbwKYa>:

Դպրոցի անցկացման, մասնակցության պայմանների, ինչպես նաև նախնական օրակարգի վերաբերյալ մանրամասն տեղեկատվություն կարող եք գտնել կցված փաստաթղթերում, միջոցառման [Ֆեյսբուքյան էջում](#), ինչպես նաև «Նորարարությունների կառավարում» III միջազգային երիտասարդական գիտական դպրոցի պաշտոնական կայքում՝ <https://innovmanage2017.wixsite.com/youthschool>: